## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Սպիտակ քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Սամարա քաղաքային թաղամասի շրջանի (Ռուսաստանի Դաշնություն)**

ՀՀ Սպիտակ համայնքը (Հայաստանի Հանրապետություն)՝ ի դեմս Սպիտակ համայնքի ղեկավար Գագիկ Հենրիկի Սահակյանի, և ՌԴ Սամարա քաղաքային շրջանը՝ ի դեմս Սամարա քաղաքային շրջանի ղեկավար Ելենա Վլադիմիրի Լապուշկինայի, այսուհետ՝ «Կողմեր», հիմնվելով տնտեսվարող սուբյեկտների համագործակցության խրախուսման և նրանց միջև ուղիղ կապերի հաստատման մտադրությամբ, որոնք տեղակայված են Սպիտակ համայնքի տարածքում (Հայաստանի Հանրապետություն) և Սամարա քաղաքային շրջանում (Ռուսաստանի Դաշնություն) մեծ նշանակություն տալով համագործակցության պահպանմանն ու զարգացմանը, առևտրատնտեսական, սոցիալ-մշակութային և հումանիտար ոլորտներում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

ՀՀ և ՌԴ օրենսդրության համաձայն՝ 2 կողմերը իրենց իրավասության շրջանակներում հիմնվելով փոխշահավետ սկզբունքների, փոխըմբռման, հարգանքի, վստահության և իրենց վրա վերցրած պարտականությունների բարեխղճորեն կատարման վրա, սահմանում և զարգացնում են երկարաժամկետ և բազմակողմանի միջտարածաշրջանային, առևտրատնտեսական, սոցիալմշակութային և հումանիտար կապեր:

Կողմերը իրենց իրավասության շրջանակներում համաձայն ՀՀ օրենսդրության և ՌԴ օրենսդրության, միջոցներ են ձեռնարկում տնտեսության տարբեր ոլորտներում փոխշահավետ կապերի կայուն զարգացման համար:

## Հոդված 2

Միջազգային (միջտարածաշրջանային) հարաբերությունները զարգացնելու և համագործակցության առաջնահերթությունների բացահայտման նպատակով կողմերը կկարողանան ուղղակի շփումներ հաստատել Սպիտակ քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Սամարա քաղաքի (Ռուսաստանի Դաշնություն) քաղաքապետարանների միջև: ՀՀ օրենսդրության և ՌԴ օրենսդրության համաձայն, կողմերը մշակում և հաստատում են սույն համաձայնագրի իրականացմանն ուղղված ծրագրեր և (կամ) գործողությունների ծրագրեր, որի նպատակն է անհրաժեշտության դեպքում իրականացնել սույն համաձայնագրի, ծրագրերի և (կամ) գործողությունների ծրագրերի իրականացման վերաբերյալ երկկողմ խորհրդատվություններ և բանակցություններ:

## Հոդված 3

Տնտեսական հարաբերությունների զարգացման և ընդլայման նպատակով կողմերը նպաստում են առևտրի, շինարարության, տրանսպորտի, զբոսաշրջության, կոմունալ տնտեսության, փոքր և միջին ձեռնարկությունների և այլ ոլորտներում համագործակցության հաստատմանը, պահպանմանն ու ընդլայնմանը:

## Հոդված 4

Կողմերը նպաստում են համատեղ հանդիպումների, ֆորումների, կոնֆերանսների և այլ միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես նաև առևտրի կազմակերպման ոլորտում համագործակցության զարգացմանը:

## Հոդված 5

Կողմերը նպաստում են մշակույթի, կրթության, սպորտի և այլ ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, երիտասարդության և հասարակական կազմակերպությունների միջև փոխգործակցության, այդ թվում, փորձի փոխանակման միջոցով:

## Հոդված 6

Կողմերը անհապաղ քննարկում են սույն համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող խնդիրները և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում դրանց դրական լուծման համար՝ ՀՀ օրենսդրությանը և ՌԴ օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 7

Սույն համաձայնագրի դրույթները չեն ազդում կողմերի իրավունքների և պարտականությունների վրա, որոնք ծագում են այլ պայմանագրերից, որոնց մասնակիցները հանդիսանում են կողմերը:

## Հոդված 8

Սույն համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Սույն համաձայնագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ, ստորագրված կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից և հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագիրն ավտոմատ կերպով երկարաձգվում է 5 տարի ժամկետով, պայմանով, որ կողմերից ոչ մեկը, ոչ ուշ, քան պայմանագրի ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ, գրավոր հայտարարում է այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Ստորագրված է Սպիտակ քաղաքում 2019թ ապրիլի 27-ին չորս հավասարազոր օրինակով, երկու օրինակ՝ ռուսերեն և երկու օրինակ հայերեն:

| | |
|---|---|
| Սպիտակ համայնքի ղեկավար | Սամարա շրջանի ղեկավար |
| ______ Գ.Հ. Սահակյան | ______ Ե.Վ. Լապուշկինա |

# СОГЛАШЕНИЕ О СОТРУДНИЧЕСТВЕ
## между городом Спитаком (Республика Армения)
## и городским округом Самара (Российская Федерация)

Город Спитак (Республика Армения) в лице Мэра города Спитака Саакяна Гагика Генриховича и муниципальное образование городской округ Самара (Российская Федерация) в лице Главы городского округа Самара Лапушкиной Елены Владимировны, именуемые в дальнейшем «Стороны», исходя из намерения поощрять сотрудничество и установление прямых связей между хозяйствующими субъектами, расположенными на территории города Спитака (Республика Армения) и городского округа Самара (Российская Федерация), придавая важное значение сохранению и развитию сотрудничества в торгово-экономической, социально-культурной и гуманитарной сферах, согласились о нижеследующем:

**Статья 1**

Стороны в рамках своей компетенции в соответствии с законодательством Республики Армении и законодательством Российской Федерации на основе принципов взаимной выгоды, взаимопонимания, уважения, доверия и добросовестного исполнения принятых на себя обязательств устанавливают и развивают долговременные и всесторонние международные торгово-экономические, социально-культурные и гуманитарные связи.

Стороны в рамках своей компетенции и в соответствии с законодательством Республики Армении и законодательством Российской Федерации принимают меры по обеспечению стабильного развития взаимовыгодных связей в различных отраслях экономики на долгосрочной основе.

**Статья 2**

В целях развития международных связей и определения приоритетных направлений сотрудничества Стороны содействуют установлению прямых контактов между органами власти и управления города Спитака (Республика Армения) и городского округа Самара (Российская Федерация).

Стороны в соответствии с законодательством Республики Армении и законодательством Российской Федерации разрабатывают и утверждают программы и (или) планы мероприятий, направленные на реализацию настоящего Соглашения, и проводят по мере необходимости двусторонние консультации и переговоры по вопросам исполнения настоящего Соглашения, программ и (или) планов мероприятий, направленных на его реализацию.

**Статья 3**

В целях развития и расширения торговых и иных экономических отношений Стороны в рамках предусмотренных действующим законодательством полномочий способствуют установлению, сохранению и расширению сотрудничества в сферах торговли, строительства, транспорта, туризма, ЖКХ, малого и среднего предпринимательства и других.

**Статья 4**

Стороны способствуют организации и проведению совместных встреч, форумов, конференций и других мероприятий, а также расширению сотрудничества в сфере создания условий для обеспечения развития торговли.

**Статья 5**

Стороны способствуют расширению сотрудничества в области культуры, образования, спорта и других сферах, взаимодействию между молодежными и общественными организациями, в том числе посредством обмена опытом.

**Статья 6**

Стороны оперативно рассматривают возникающие в процессе реализации настоящего Соглашения проблемы и принимают необходимые меры по их положительному решению в соответствии с законодательством Республики Армении и законодательством Российской Федерации.

### Статья 7

Положения настоящего Соглашения не затрагивают прав и обязательств Сторон, вытекающих из других договоров, участниками которых они являются.

### Статья 8

Настоящее Соглашение заключается на пять лет и вступает в силу с момента его подписания обеими Сторонами. Изменения и дополнения в настоящее Соглашение вносятся после согласования Сторонами. Изменения и дополнения оформляются в письменном виде, подписываются уполномоченными представителями Сторон и являются неотъемлемой частью настоящего Соглашения.

Действие Соглашения продлевается автоматически на следующие пять лет при условии, что ни одна из Сторон не позднее чем за шесть месяцев до окончания срока действия Соглашения не заявит письменно о намерении прекратить его действие.

Подписано в городе Спитак «27» апреля 2019 года в четырёх экземплярах, по два экземпляра на русском и армянском языках, причем оба текста имеют одинаковую силу.

Мэр города Спитака

________________ Г.Г.Саакян

Глава городского округа Самара

________________ Е.В.Лапушкина